Բարսեղյան Ա., Հեռուստատեսության լեզուն (Հ1 և 1 լուրեր.am) (հոդված)

Հոդվածում քննվում է Հ1-ի և 1 լուրեր.am-ի լեզուն, որն աչքի է ընկնում տարաբնույթ շարահյուսական և բառագործածական սխալներով: Հոդվածագրի հավաստմամբ՝ հեռուստատեսության լեզուն պատկերացում է տալիս հանրության լեզվական մշակույթի որակի մասին: Արձանագրելով բազում սխալներ՝ նա նշում է, որ «հայերենը՝ աստվածների հետ խոսելու լեզուն» (Ջ. Բայրոն) պետք է գերծ մնա մեղանչումներից:

Բարսեղյան Ա., Շարահյուսական կապակցման եղանակների ընդհանուր բնութագիրը արդի գեղարվեստական արձակում (հոդված)

Հոդվածագիրը փաստական հարուստ նյութի քննությամբ ցույց է տալիս, որ արդի գեղարվեստական արձակում առդրություն

շարահյուսական կապակցության եղանակի դրսևորումները երբեմն չեն համապատասխանում գրական հայերենի օրինաչափություններին՝ պայմանավորված ոճական նկատառումներով:

Բարսեղյան Ա., Խնդրառություն կապակցության եղանակի ընդհանուր բնութագիրը արդի գեղարվեստական արձակում (հոդված)

Հոդվածում ներկայացվում է խնդրառություն կապակցության եղանակի ընդհանուր բնութագիրը արդի գեղարվեստական արձակ խոսքում: Այդ բնութագրից պարզվում է, որ միևնույն հարաբերությունը կարող է արտահայտվել ոչ միայն որևէ հոլովով առանձին վերցրած, այլև այլ հոլովով ու կապով միասին վերցրած:

Հոդվածագրի վկայությամբ՝ դրանք որոշ դեպքերում չեն համապատասխանում գրական հայերենի օրինաչափություններին: Ներկայացնելով խնդրառություն կապակցության դրսևորումները արդի գեղարվեստական արձակ խոսքում պարզվում է, որ միևնույն հարաբերությունը կարող է արտահայտվել ոչ միայն որևէ հոլովով առանձին վերցրած, այլև այլ հոլովով ու կապով միասին վերցրած:

Գալստյան Ա., Թեյյան Լ., Հայերենի տալ բայի իմաստագործառական քննություն (հոդված)

Հոդվածը կայուն բառակապակցություններում ամենից հաճախ կիրառվող բայերի իմաստագործառական քննությանը վերաբերող աշխատանքների շարքից է: Վերլուծվում են տալ բայի իմաստների, նրանով կազմությունների դրսևորումները լեզվի հասարակական և տարածական տարբեր ոլորտներում՝ գրական հայերեն, ժողովրդախոսակցական հայերեն, բարբառ (հիմնականում Արցախի բարբառի նյութը), ժարգոն: Դիտարկվում են տալ բայի իմաստները, ապա և դրանով կազմված հարադրությունները: Վերջինները քննվում են ըստ հարադրության բաղադրիչների քանակի,

հարադիր բառի խոսքիմասային պատկանելության, հարադրության՝ նույն իմաստն արտահայտող այլ բայով կամ էլ այլ կարգի բառերով փոխարկվելու, ինչպես նաև դրանց՝ լեզվի տարբեր շերտերում տարածված լինելու իրողությունները:

Թեյյան Լ., Լեզվական նորմից շեղումներ զանգվածային տեղեկատվության լեզվում (հոդված)

Հոդվածում ներկայացվում և վերլուծվում են տեղեկատրվության ժամանակակից միջոցներում, հատկապես հեռուստատեսային հաղորդումներում հանդիպած առավել բնորոշ լեզվական սխալներ ու շեղումներ՝ դրանց վրա ոլորտի պատասխանատուների ուշադրությունը սևեռելու և լրատվության լեզուն ըստ հնարավորին մաքուր և կանոնական տեսնելու մտահոգությամբ:

Հավաքված նյութը դասակարգված է ըստ լեզվական մակարդակների և ուղեկցվում է մասնագիտական մեկնաբանություններով ու հանձնարարականներով: Այսպես, նշվում է, որ *բառագործածության* սխալները մի շարք պատճառներով են պայմանավորված՝ բառիմաստի ոչ ճիշտ ընկալում, բառի սխալ կազմություն, ոճական անհամապատասխանություն համատեքստին, բաղաբարություն, չարդարացված օտարամոլություն, ձևաբանական սխալները վերաբերում են հիմնականում հոգնակազմության, հոլովակազմության, բայակազմության և բայակիրառության կանոններին, *շարահյուսական* մեղանշումները՝ համաձայնության և խնդրառության ոլորտներին: Առկա են նաև օտար շարահյուսական կառույցների անհաջող պատճենումներ:

Թեյյան Լ., Բարդ նախադասության տեսության հարցերը Սերգեյ Աբրահամյանի աշխատություններում (հոդված)

Հոդվածում նշվում է, որ հայ շարահյուսագիտության մեջ ա-կադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի ավանդը մեծ չափով վերաբե-

րում է նաև բարդ նախադասության տեսության մշակմանը: Մասնավորապես բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգման հարցում նրա կիրառած գիտական սկզբունքը որոշակիորեն տարբերվում է շարահյուսագիտական գրականության մեջ ներկայացվող այլ մոտեցումներից և, հոդվածագրի կարծիքով, հնարավորություն է տալիս տրամաբանորեն առավել ստույգ ստորակարգել և բնութագրել շարահյուսական այդ կառույցները: Ինչպես քերականական շատ այլ իրողությունների, այնպես էլ բարդ նախադասության կառուցվածքային և իմաստային կողմերի տեսական ուսումնասիրության բնագավառում Ս. Աբրահամյանի վաստակն արժևորվում է նաև նրանով, որ այն արժանավորապես ներկայացված է իր հեղինակած ուսումնամեթոդական ծրագրերում, բուհական և դպրոցական դասագրքերում:

**Խաչատրյան Ն., Գրական հայերենը ԶԼՄ-ներում
(22-ի «Լրաբեր» հաղորդաշարի լեզվական վերլուծություն)**
(հոդված)

Հոդվածագիրը քննում է 22 հեռուստաընկերության «Լրաբեր» լրատվական հաղորդաշարի լեզուն, որը, որպես զանգվածային հաղորդակցության միջոց, ազդում է հանրային լեզվամտածողության ձևավորման վրա: Ուսումնասիրության նյութ են հաղորդաշարի՝ 2025 թ. հունվար–փետրվար ամիսներին հեռարձակված մի շարք թողարկումներ: Նպատակն է բացահայտել հաղորդման լեզվական նորմերից շեղումների հիմնական տեսակներն ու դրանց առաջանալու գործոնները:

Վերլուծությամբ արձանագրվում են բազմաբնույթ լեզվաոճական անճշտություններ՝ բառաձևերի և բառագործածության սխալներ, ավելորդաբանություններ, օտարաբանությունների և դրանց կաղապարով կառուցվածքների կիրառում, ինչպես նաև շարահասության, համաձայնության և բարդ նախադասության

բաղադրիչների կապակցման ոչ կանոնական դրսևորումներ: Նըշված շեղումները պայմանավորված են լրագրողների լեզվամտածողության առանձնահատկություններով, մայրենի լեզվի նորմերի ոչ լիարժեք յուրացմամբ և օտար լեզվական կառույցների ընդօրինակմամբ:

Հակոբյան Ֆ., Արհեստական բանականության համակարգերի դերը բառիմաստի բացատրության գործընթացում (հոդված)

Հոդվածում ներկայացվում են տպագիր, էլեկտրոնային բառարանների և ԱԲ չաթբոտերի՝ բառիմաստները ներկայացնելու տարբերությունները:

Ըստ հոդվածագրի՝ ի տարբերություն տպագիր և էլեկտրոնային բառարանների՝ ԱԲ չաթբոտերում բառահոդվածը որևէ հըստակ կառուցվածք չունի: Դրանք բառիմաստի բացատրությունը ներկայացնելիս հաշվի են առնում օգտատիրոջ հետաքրքրությունները և որոնման վարքագիծը՝ տալով բառիմաստի ավելի անհատականացված բացատրություն:

Հարյուրավոր բառերի բառիմաստների բացատրությունների համեմատություններից հոդվածագիրը նկատում է, որ բառարանագիրները տալիս են բառիմաստի կարճ բացատրությունները, LLM-ները ներկայացնում են բառիմաստի առավել ընդարձակ բացատրությունը և ընդհանուր նկարագրությունը:

Մինևույն ժամանակ հեղինակն ընդգծում է, որ ԱԲ համակարգերը կարող են հանդես գալ միայն իբրև *օժանդակ միջոց* որևէ դեպքում չեն կարող ամբողջությամբ փոխարինել լեզվաբան-բառարանագիրների կատարած աշխատանքը, քանի որ LLM-ների կիրառությունը էլեկտրոնային բառարանագրության մեջ ունի մի շարք տեսական և գործնական սահմանափակումներ:

Հակոբյան Ֆ., Արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառությունը էլեկտրոնային բառարանագրության մեջ (հոդված)

Հոդվածագիրը հանգամանալից անդրադառնում է արհեստական բանականության հիմնական տեխնոլոգիաներին և մեծածավալ լեզվական մոդելներին (LLM)՝ ChatGPT, Gemini, LLaMA, Claude, Mistral, Grok և այլն: Ներկայացնում է նաև արհեստական բանականության առավել զարգացած այլ տեխնոլոգիաներ (մեքենական ուսուցում (Machine Learning), խորքային ուսուցում (Deep Learning)), որոնք լայնորեն կիրառվում են էլեկտրոնային բառարանագրության բնագավառում: Այս տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս լեզվական մոդելներին ավտոմատ կերպով սովորել լեզվական օրինաչափությունները՝ մեծածավալ լեզվական տվյալների հիման վրա: Ըստ հեղինակի՝ էլեկտրոնային բառարանագրության մեջ կիրառվող ԱԲ տեխնոլոգիաները նպաստում են մի կողմից՝ բառարանագրական աշխատանքների դյուրացմանը՝ մեքենայացնելով բազմաթիվ գործընթացներ, մյուս կողմից՝ կարող են ներկայացնել բառի՝ լեզվի իմաստային հիմնական միավորի սպառիչ բնութագիրը:

Հեղինակը եզրակացնում է, որ արհեստական բանականության ժամանակակից տեխնոլոգիաները (NLP, մեքենական ուսուցում, խորքային մոդելներ, chatbot-մեսինջերներ), զարգացման միանգամայն նոր հնարավորություններ են ընձեռում էլեկտրոնային բառարանագրության բնագավառում: LLM լեզվական մոդելները ոչ միայն ընդլայնում են էլեկտրոնային բառարանների կիրառական հնարավորությունները, այլև նպաստում են առավել նորարարական, ինտերակտիվ բառարաններ ստեղծելուն, որոնք համապատասխանում են 21-րդ դարի լեզվատեխնոլոգիական պահանջներին և կարող են օգտակար լինել ինչպես լեզվաբաններին, այնպես էլ գիտական հանրության առավել լայն շրջանակի:

Ղազարյան Հ., Հնչերանգը և տրոհումը տարարժեք շարահյուսական կառույցների տարբերակման միջոց (հոդված)

Հոդվածում քննվում են ժամանակակից հայերենում բառական միևնույն կազմն ունեցող շարահյուսական այն տարարժեք կառույցները, որոնք տարբերակելու, իմաստները որոշակիացնելու, հստակեցնելու համար բանավոր խոսքում կարևոր դեր են կատարում հնչերանգը, առանձնապես քերականական արժեք ունեցող դադարները, իսկ գրավոր խոսքում՝ տրոհության տարբեր նշանները: Հոդվածագիրն իբրև պատճառ ընդգծում է այն, որ խոսքն իր առարկայական և վերաբերմունքային առումներով շատ բազմազան ու բազմաբնույթ է, և խոսք կառուցելու առարկայական օրինաչափությունները հաճախ խաչաձևում են խոսողի վերաբերմունքը և տրամաբանության գործոնը: Դա էլ դառնում է հիմք նույն շարահյուսական կառույցներն ընկալելու և կետադրելու տարբեր կերպ: Հոդվածում կարևորվում է հնչերանգի և տրոհության դերը շարահյուսական տարարժեք նման կառույցներում նախադասության անդամները տարբերակելու, նրանց միջև իմաստային կապերի առկայությունը, լրացական-քերականական հարաբերությունները պարզելու տեսանկյունից:

Ղազարյան Հ., Ընդհանուր լեզվաբանություն (գործնական աշխատանքների ձեռնարկ)

Ձեռնարկը գրված է ընդհանուր լեզվաբանության բուհական ծրագրի հիման վրա: Այն ընդգրկում է լեզվաբանության բոլոր բաժիններին վերաբերող ինքնաստուգման հարցեր և գործնական առաջադրանքներ, որոնք ուղղված են ուսանողների ինքնուրույն աշխատանքը նպատակամղելու անցնելիք տեսական նյութը յուրացնելուն և գործնական կարողություններն ու հմտությունները զարգացնելուն:

Ձեռնարկում գործնական առաջադրանքները ներկայացվում են երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: Առաջադրանքները գուգահեռ կատարելը հնարավորություն է տալիս համեմատական քննությամբ անդրադառնալու նաև լեզուների ընդհանրություններին ու տարբերություններին:

Ղազարյան Հ., Տարարժեք երկրորդական ձևայինները ժամանակակից հայերենում (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ լեզվական տարարժեքությունը կապված է լեզվական տարբեր մակարդակների միավորների ձևախմբաստային փոխհարաբերությունների հետ և արտահայտվում է իմաստակիր միավորներ ունեցող բոլոր մակարդակներում՝ ձևային, բառային, ձևաբանական և շարահյուսական: Քանի որ լեզվական միավորների իմաստի ու արժեքի տեղաշարժերը ոչ թե լեզվի մեկ առանձին փուլին հատուկ երևույթ են, այլ լեզվի ներքին զարգացման ընդհանուր գործընթացի արտահայտություն ու հետևանք, ուստի դրանց քննությունը հոդվածագիրը համարում է կարևոր և արդիական լեզվի զարգացման բոլոր շրջաններում:

Հոդվածում ներկայացվում են արդի լեզվամտածողությամբ մասնակի տեղաշարժի ենթարկված այն երկրորդական ձևայինները, որոնք, ենթարկվելով իմաստափոխության, բացի իրենց հատուկ հիմնական գործածությունից, հանդես են գալիս նաև մեկ այլ գործածությամբ և համապատասխանաբար ստանում նաև այդ երկրորդական գործածության հատուկ իմաստը: Ընդգծվում է, որ կան տարարժեք երկրորդական ձևայիններ, որոնք միևնույն բառի մեջ համատեղում են տարբեր իմաստներ կամ էլ իմաստային տարարժեքությունն արտահայտում են տարբեր բառերում: Նշվում է նաև, որ տարարժեք ձևայինները կարող են տարբերակվել երբեմն խոսքից դուրս, երբեմն էլ՝ միայն խոսքում:

**Ղազարյան Հ., Լեզվական շեղումներ. «5-րդ ալիք»
հեռուստաընկերություն (հոդված)**

Հոդվածում նշվում է, որ գրական լեզվի աղավաղումները դարձել են սովորական և այսօր, քան երբևէ, զգացվում է սեփական լեզուն ինքնավերահսկելու խիստ անհրաժեշտություն: Հոդվածագիրն ընդգծում է, որ հեռուստատեսությունը՝ որպես զանգվածային լրատվամիջոց, համարվում է լեզվական մշակույթի տարածման և ամրապնդման հզոր գործիք, և հեռուստատեսային լեզվի մաքրությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն տեղեկատվության որակը բարձրացնելու, այլև ազգային լեզվամշակույթը պահպանելու ու հարստացնելու համար: Այն ոչ միայն արտացոլում է հասարակության լեզվական վիճակը, այլև ձևավորում նոր լեզվական միտումներ:

Ուսումնասիրության շրջանակում հոդվածագիրն անդրադառնում է «5-րդ ալիքի» հեռուստատեսային հաղորդումներից «Հայլուր», «Օրագիր» և «Հարցազրույց» հաղորդաշարերի լեզվական որակին: Նա արձանագրում է, որ ի տարբերություն համապատասխան լեզվական կրթություն և պատրաստվածություն ունեցող հաղորդավարների հստակ, գրագետ, կառուցվածքային առումով ճիշտ ու հասկանալի լեզվի՝ հրավիրված քաղաքագետների և փորձագետների խոսքը երբեմն շեղվում է գրական հայերենի լեզվական նորմից, պարունակում բազմապիսի և բազմաբնույթ, բայց նույնատիպ սխալներ, որոնք խախտում են լեզվի միասնականությունը և անթույլատրելի են հատկապես քաղաքական-վերլուծական հաղորդումներում:

Ղամոյան Լ., «Պար» հասկացությունը և նրա բառակազմական առանձնահատկությունները գրական հայերենում (հոդված)

Հոդվածում ներկայացվում են «պար» բառի իմաստային և հատկապես բառակազմական առանձնահատկությունները հայե-

րենում: Հատուկ ուշադրություն է դարձվում «պար» արմատի իմաստային նրբերանգներին, իմաստային փոփոխություններին: Առանձնացվում են նաև «պար» արմատով կազմված ոչ միայն հնացած բառերը, այլև նորակազմությունները:

Ղամոյան Լ., «Խաղ» արմատի բառակազմական և իմաստային առանձնահատկությունները (հոդված)

Հոդվածում ուսումնասիրվում է «խաղ» բառի իմաստային բազմաշերտությունը հայերենում: Արձանագրվում է, որ արմատն ունի երկու տասնյակից ավելի նշանակություններ, որոնք դրսևորվում են նաև բառակազմական համակարգում: Հոդվածագիրը նշում է, որ «խաղ» արմատով ձևավորվել են ինչպես ածանցավոր, այնպես էլ բարդ և բարդաձանցավոր բառեր՝ ստեղծելով հոմանշային ու հականշային շարքեր, համանուն բառեր ու բառային տարբերակներ: «Խաղ» արմատը բառակազմական լայն հնարավորությունների շնորհիվ նպաստել է նաև մենիմաստ և բազմիմաստ բառերի առաջացմանը, իսկ դարձվածային միավորների ու առանձնների մեջ այս արմատի կիրառությունը արտացոլում է նրա արտահայտչական ուժն ու լեզվագործառական դերը:

Ղամոյան Լ., Անաղարտ պահենք մեր մայրենին (հոդված)

Հոդվածագրի վկայությամբ՝ հասարակական-քաղաքական նոր պայմաններում փոփոխությունների է ենթարկվում նաև ԶԼՄ-ների լեզուն, որի դերը լեզվամշակույթում առանձնահատուկ կարեւորություն ունի: Վերջին տարիներին գրագետ շարադրված նյութերից բացի՝ հաճախ հանդիպում են ոչ ճշգրիտ, աղավաղված բազմաթիվ ձևակերպումների:

Նրա հավաստմամբ՝ մայրենի լեզվի աղավաղումը կարող է բացասական ազդեցություն ունենալ լայն լսարանի վրա: Ուստի

կարևոր է համապատասխան վերահսկողության մեխանիզմների մշակումն ու կիրարկումը:

Հոդվածում առանձնացվում են էլեկտրոնային տիրույթում առկա թերթերից մեկի՝ news.am-ի լեզվին բնորոշ բառային ու քերականական կանոններից մի շարք շեղումներ, սխալ կազմություններ, ոճական անհանձնարարելի կիրառություններ և այլն:

Մարգարյան Ի., Համանուն և հարանուն բաղադրիչներով նորակազմություններն արդի հայերենում (հոդված)

Հոդվածում քննվում են համանուն և հարանուն բաղադրիչներով նորակազմությունները արդի հայերենում՝ ըստ «Նոր բառեր» բառարանաշարի (Ա-Ը պրակներ) նյութի: Հոդվածագիրն ուսումնասիրում է համանուն ածանցների և ածանցակերպերի բառաստեղծական եղանակներն ու միտումները: Դիտարկումները ի հայտ են բերել որոշ համանուն ածանցների արտադրողականության փոփոխություն և տարբեր լրացումներով կազմությունների ակտիվացում: Հարանուն բաղադրիչների դեպքում քննվել են *-հենք* («հենված») և *-հեն* («ավազակ») ձևերը՝ ցույց տալով դրանց ձևական նմանության հետևանքով առաջացած իմաստային շփոթն ու բառակազմական սխալները:

Մարգարյան Լ., Արցախի բնականությունների անվանակոչման սկզբունքները և իմաստային դաշտի կարգաբանությունը (հոդված)

Արցախի տեղանվանական համակարգի պատմական զարգացման ընթացքը բաժանվում է հինգ հիմնական փուլերի՝ հնագույն շրջանից մինչև անկախության շրջան: Հոդվածում քննվում է *ԼՂ չճանաչված հանրապետության անկախության շրջանի* (1991-2020թթ.) բնականվանացանկը, որը մի կողմից՝ Արցախի տեղանվանական համակարգի զարգացման ընթացքի սղագրություն է,

մյուս կողմից՝ ամբողջական պատկերացում է տալիս տեղանվանական համակարգում գործող օրինաչափությունների մասին: Ըստ քննության արդյունքների՝ Արցախի տեղանվանական համակարգում առանձնացվում են բնակավայրերի անվանակոչման 2 հիմնական սկզբունքներ: Վերլուծությամբ ընդգծվում է նաև անվանակոչման երևույթի դերը Արցախի վարչատարածքային կառուցվածքի փոփոխությունների համատեքստում՝ հատկապես սուբստրատային տարրերի վերացման և հայկական հնագույն տեղանունների վերականգնման ուղղությամբ:

Հոդվածի եզրափակիչ հատվածում ակնարկային ձևով գուցադրվում են հարակից տարածաշրջանների ժողովուրդների՝ ռուսական, պարսկական և թուրքական բնականվանակոչման ավանդույթները՝ հատկանշելով ընդհանուր տեղանվանագիտական օրինաչափությունների առկայությունը, ինչպես նաև պատմահասարակական և մշակութային պայմանների առանձնահատկությունները:

Քննությունը հաստատում է, որ Արցախի տեղանվանական համակարգը հայոց տեղանվանական համակարգի մասն է, որի անվանակոչման գործընթացները արտացոլում են ինչպես տարածաշրջանի պատմական ու լեզվաբանական, այնպես էլ մշակութային ու քաղաքական առանձնահատկությունները:

**Մարգարյան Լ., Գրական արևելահայերենի նորմի կիրառումը
ABC մեղիա տեղեկատվական-վերլուծական հարթակում
(հոդված)**

Հոդվածում նշվում է, որ երկշաբաթյա կտրվածքով դիտարկված «Լուրեր», «Ռեպորտաժ» և Աբրահամ Գասպարյանի հեղինակային «Փոխիր ալիքը» հաղորդումներում լրագրողների խոսքը գրական արևելահայերենի նորմի լիարժեք իրացման դրսևորում է: Երկշաբաթյա դիտարկումով եթեր սպրդած սխալ կիրառություններն աննշան են, և դրանք դիպվածային բնույթի են:

Ըստ հոդվածագրի՝ հատկանշելի են Աբրահամ Գասպարյանի հեղինակային հաղորդման ժամանակ բառագործածության ու բառընտրության ճշգրտությունն ու նպատակայնությունը, օտարաբանությունների համակշռված և տեղին կիրառությունը, մասնագիտական եզրույթների չափավոր օգտագործումը՝ հընթացս նաև մայրենիով մեկնաբանելով, և ամենակարևորը՝ քերականական կառույցների գտությունը:

**Մարգարյան Լ., - Գերս, - ստան և - ալան ձևային
իմաստագործառական արժեքը Արցախի բնականուններում
(հոդված)**

Հոդվածագիրը նշում է, որ Արցախի բնականվանացանկում վկայված հիբրիդ տեղանունները քիչ չեն, և այդ շարքում իրանական ծագման ձևայիններով բաղադրությունները մեծ թիվ են կազմում: Դրանց քննությունը մի կողմից՝ բացահայտում է մայրենի ու փոխառյալ միավորների իմաստային զարգացման արդյունքները, մինչտեղանվանական և տեղանվանական իմաստների գործառական արժեքը, մյուս կողմից՝ փաստում դրանց վերաիմաստավորումը հայերենում՝ հաստատելով, որ տեղանվանագիտությունը նաև լեզվամշակութային հիշողությունը կրողն է:

Արցախի տեղանունները, հոդվածագրի հավաստմամբ, պատմական շերտերի յուրօրինակ դրսևորում են, որոնք ցույց են տալիս լեզվամշակութային շփումների, փոխառությունների և դրանց տեղայնացման գործընթացները: Այդ տեղանունները ոչ միայն հուշում են պատմական գործընթացների ու որպես հետեվանք դրանց լեզվաբանական զարգացումների մասին, այլև հաստատում են հայկական տեղանվանաստեղծ ավանդույթի շարունակականությունն ու ինքնատիպությունը:

Մարգարյան Լ., Արցախյան բնակավայրերի *-ի* վերջնահնչուն բաղադրիչով անվանումների քննություն (հոդված)

Հոդվածագիրը քննում է *-ի* վերջնահնչունի իմաստագործառական արժեքը Արցախի բնականություններում: *Ի*-ով վերջավորվող բնականությունները նա դասակարգում է երեք խմբի (բառակազմական *-ի ձևույթ* հնչյունափոխությամբ, բառակազմական *-ի ձևույթ* առանց հնչյունափոխության և արմատային կամ իմաստային չեզոք ձևեր): Հատկանշվում է, որ *ի*-ով վերջավորվող տեղանունները հաճախ տեղակայված են աշխարհագրորեն մերձ տարածքներում, և ենթադրելի է, որ դրանք կարող են արտահայտել որոշակի տարածքային ամբողջականություն և տեղագրական առանձնահատկություններ:

Ակնարկային գուգադրվում են նաև Արցախի տեղանվանական համակարգի *ի*-ով վերջացող և Հայաստանի Հանրապետության համանուն բնականությունները:

Մարգարյան Լ., Արցախի տեղանունների բառակազմական կաղապարները (հոդված)

Հոդվածում Արցախի տեղանունների բառակազմական խմբերն առանձնացնելիս հիմք են ընդունվում տեղանունների բառակազմական կաղապարների դասակարգման դասական և ժամանակակից սկզբունքները, մասնավորապես՝ Գ. Ջահուկյանի մոտեցումը (հաշվի առնելով որոշ առանձնահատկություններ): Ըստ այդմ՝ Արցախի տեղանունները խմբավորվում են հետևյալ կարգով. պարզ կամ արմատական տեղանուններ (ենթադասակարգումներով և մասնակաղապարներով) և բաղադրյալ տեղանուններ (մասնակաղապարներով)

Դասակարգման մեթոդը, ըստ հոդվածագրի, նոր չէ, բայց դրա կիրառումը նոր մոտեցումով և նոր նյութի քննությամբ ապա-

հովում է արդյունքների համեմատելիությունն ու համադրելիությունը հայոց տեղանվանական համակարգի տվյալներին՝ դրանք հարստացնելով նոր ենթակադապարներով:

**Մկրտումյան Ա., Մեղր և մեղու բառերը և դրանցով
կազմությունների իմաստային (թեմատիկ) դասակարգումը
հայերենում (հոդված)**

Հոդվածագիրը նշում է, որ *մեղր* և *մեղու* բառերի ստուգաբանությունները տարբեր են, որը ենթադրում է որոշ հարցերի լրացուցիչ պարզաբանում: Այդ բառերով կազմությունները հայերենի բառապաշարում շատ են: Հոդվածագիրն ուսումնասիրել է շուրջ 140 բառ, լեզվաբանական գրականության մեջ կատարված դասակարգումների օրինակով առանձնացրել իմաստային (թեմատիկ) բազմանդամ և սակավանդամ 12 խումբ՝ հաճախ առանձին ենթախմբերով: Իմաստային նման բաժանումը նշանակալից ուսումնասիրություն կարող է համարվել տարբեր հարցեր կամ երևույթներ լուսաբանելու համար: Քննության արդյունքում ձևավորվել են նաև նույնաբաղադրիչ հոմանիշ, համանուն և հարանուն բառաշարքեր:

**Մովսեսյան Ռ., Ղարաբաղի բարբառի դարձվածքների
ուսուցումը (հոդված)**

Հոդվածում կարևորվում է Ղարաբաղի բարբառի ուսուցումը մեր օրերում, որովհետև բարբառը կտրվել է բարբառային միջավայրից, և Ադրբեջանը վարում է արցախագիտության ոչընչացման հետևողական քաղաքականություն, որի դեմ պայքարելու եղանակներից մեկն էլ Ղարաբաղի բարբառի և նրանում արտացոլված լեզվամտածողության, մշակույթի, աշխարհայացքի, արժեհամակարգի ուսուցումն ու պահպանումն է՝ դրա միջոցով սերունդների մեջ ձևավորելով ազգային ինքնաճանաչողություն, ինքնավստահություն և ինքնապաշտպանական կարողություններ:

Լեզվական միավորներից դարձվածքները, ըստ հոդվածագրի, լավագույնս են արտացոլում ժողովրդի մտածողությունը, բարքերը, բարոյական արժեքները, կենսափիլիսոփայությունը, որովհետև դրանք ժողովրդական լեզվում հղկված, իմաստային առումով խտացված կառույցներ են:

Հոդվածի նպատակն է առաջարկել սկզբունքներ և մեթոդական հնարներ, որոնք սովորողների կողմից Ղարաբաղի բարբառի դարձվածքների և դրանց միջոցով Արցախի ժողովրդի լեզամտածողության ու կենսափիլիսոփայության յուրացումը կդարձնեն ավելի արդյունավետ և համակողմանի:

Հոդվածագիրը ներկայացնում է բարբառային դարձվածքների ուսուցման արդյունավետությանը նպաստող սկզբունքներ (դարձվածքների ուսուցանում զուգադրական մեթոդով, բարբառակիրների բնավորության ամենաարտահայտված գծերի, կենսակերպի ու մտածողության մասին ավելի ընդգրկուն պատկերացում տվող դարձվածքների ընտրություն, ուսուցման գործընթացում ավանդական և ժամանակակից մեթոդների արդյունավետ համադրում, դարձվածքների գործածության հաճախականության գնահատմամբ):

Մովսիսյան Ռ., Լեզվական սխալներ լրատվական կայքէջերից (հոդված)

Հոդվածագիրը, նշելով, որ մեր օրերում հասարակության գիտակցության և լեզվամտածողության ձևավորման վրա մեծագույն ներգործություն ունեն զանգվածային լրատվական միջոցները, որոնք հասանելի են հանրության բոլոր շերտերին, նաև արձանագրելով, որ փաստորեն ՁԼՄ-ներում են ձևավորվում լեզվի զարգացման միտումները, անդրադառնում է <https://168.am/> կայքէջի մեկ շաբաթվա լրահոսում տեղ գտած բառագործածության և քերականական սխալներին, ինչպես նաև օտարաբանություններին:

Քննությունը բացահայտում է, որ կայքէջում շատ են անհարկի գործածված օտար բառերը: Տարածված են հատկապես խընդրառական ու համաձայնության սխալները:

Ներսիսյան Վ., Բառակազմության տեսական և մանկավարժական հարցերի քննությունը Արարատ Ղարիբյանի աշխատություններում (հոդված)

Արդի հայերենի բառակազմության տեսությունն ամբողջացնելու նպատակով պայմանավորված՝ հոդվածում փորձ է արվում ներկայացնելու Արարատ Ղարիբյանի հիմնարար աշխատություններում (դպրոցական դասագրքեր և բուհական ձեռնարկներ) արտացոլված տեսական մոտեցումներն ու ձևակերպումները ժամանակակից հայերենի բառակազմության, ինչպես նաև նրա դասավանդման հարցերի վերաբերյալ: Ներկայացվում են տարբեր հայերենագետների գնահատականները հայ մանկավարժական լեզվաբանության հիմնադիր լեզվաբանի՝ խնդրո առարկա և հարակից այլ ոլորտներում իրականացրած գործունեության վերաբերյալ: Մասնավորապես ցույց է տրվում, որ Ա. Ղարիբյանի ներդրումը բառակազմության ոլորտում հիմնականում դասավանդման հարցերի համակարգումն ու մեթոդական քայլաշարի մշակումն է:

Ներսիսյան Վ., Բառակազմության տեսական հարցերի քննությունը Մերգեյ Աբրահամյանի աշխատություններում (հոդված)

Հոդվածում ներկայացվում են Ս. Աբրահամյանի մոտեցումները ժամանակակից հայերենի բառակազմության տեսական հարցերի վերաբերյալ, որոնք արտացոլված են լեզվաբանի մի քանի հիմնարար աշխատություններում: Ցույց է տրվում, թե նա ի՞նչ նորամուծություններ է կատարել խնդրո առարկա հարցերի առնչությամբ և ինչո՞վ է նպաստել ժամանակակից հայերենի բառակազմության ուսմունքի զարգացմանը: Մասնավորապես նշվում է, որ

Ս. Աբրահամյանն իր աշխատություններում խոր և բազմակողմանի քննել է հայերենի բառապաշարը և զգալի ներդրում ունեցել ինչպես բառերի կազմության եղանակների, այնպես էլ բառակազմության տեսական հարցերի մշակման, համակարգման առումով առհասարակ: Դա, ըստ հոդվածագրի, ակնհայտ է հատկապես չրթեքվող խոսքի մասերի կառուցվածքային առանձնահատկությունները քննելիս:

Ներսիսյան Վ., Ղալակչյան Ռ., Բառապաշարի լեզվաոճական առանձնահատկությունները Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում (հոդված)

Հոդվածագիրները փորձել են ներկայացնել Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակի բառապաշարի լեզվաոճական առանձնահատկությունները, ցույց տալ գրողի լեզվական արվեստի բնորոշ գծերը:

Անշուշտ, բառապաշարի ոճական դասակարգման տարբեր մոտեցումներ կան, սակայն գեղարվեստական երկի բառապաշարն ուսումնասիրելիս այդ մոտեցումների հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ ուսումնասիրվող ստեղծագործության ժանրային առանձնահատկությունները, երկի թեման, ներկայացվող ժամանակաշրջանը: Ելնելով այս ամենից՝ փորձ է արվում «Ծաղկած փշալարեր» վիպակի բառապաշարում առանձնացնելու հետևյալ խմբերը. նորաբանություններ, օտարաբանություններ, բարբառային բառեր և արտահայտություններ, դարձվածքներ:

Ներսիսյան Վ., Դիտարկումներ լրատվամիջոցներում հայերենի գործածության վերաբերյալ (հոդված)

Հոդվածում հեղինակը փորձում է ներկայացնել զանգվածային լրատվամիջոցների լեզվավիճակին վերաբերող իր դիտարկումները <https://www.aravot.am> լրատվական կայքի օրինակով:

Արձանագրվում է, որ լեզվական նորմայից շեղումները շատ չեն բուն լրագրողական խոսքում, սակայն դրանք բազմաթիվ ու բազմաբնույթ են մեջբերումներում, որոնք, բնականաբար, ամենատարբեր շերտերի մարդկանց խոսքն են ներկայացնում և կարող են դիտարկվել ոճական նորմայի տեսանկյունից: Սակայն որոշ դեպքերում, ըստ հոդվածագրի, համապատասխան աշխատանք է անհրաժեշտ՝ գրական հայերենի լեզվական նորմայի սահմանները չխախտելու, մայրենին չվնասելու նպատակով:

**Ներսիսյան Վ., Արդի հայերենի բառագիտության,
քերականության և ոճագիտության հարցեր
(հոդվածների ժողովածու)**

Արդի հայերենի բառագիտության և քերականության կանոնարկման խնդիրներին, ոճական առանձնահատկություններին վերաբերող սույն ժողովածուն ամփոփում է տարբեր ժողովածուներում, հանդեսներում հեղինակի հրատարակած հոդվածները, որոնք որոշ շտկումներով և լրամշակված տարբերակներով ներկայացվում են ըստ առանձին բաժինների: Դրանցում փորձ է արվել փաստական նյութի հիման վրա ներկայացնելու այս կամ այն լեզվական միավորի ընկալման, գործածության վերաբերյալ հեղինակի տեսակետները: Մասնավորապես քննվել է հոդակապի արժեքը ժամանակակից հայերենի ածանցավոր բառերում, դիտարկվել է հավաքականություն և հոգնակիություն արտահայտող *-ենք, -անք, -ոնք, -ունք* ձևությունների գնահատումը հայերենի քերականական աշխատություններում: Անդրադարձ է կատարվել *Նոյան* և *նոյան* բառերի կազմությանը և գործածությանը, *կիսել* և *կիսվել* բայերի իմաստային դրսևորումներին, *տնօրենություն* և *տնօրինություն* բառերի գործածությանը, հայերենի *համաձայնել* և *համաձայնվել* բայերի իմաստային տարբերակման, գրական արևելահայերենի *կարող եմ* հարադրության ձևաբանական, *մերոնք* և *ձերոնք* բառերի խոսքիմասային արժեքների հարցերին:

Անդրադարձ է կատարվել նաև ոճագիտության որոշ հարցերի, որոնք կհետաքրքրեն մասնագիտական շրջանակներին:

Մասնավորապես կատարվել է հայկական ժողովրդական հանելուկների լեզվաոճական, Գևորգ Բաղդիշյանի «Մուսալեռցի պապս» խոհագրության լեզվի պատկերավորման միջոցների քննություն:

Նոր բառեր, պրակ Թ (բառարան)

«Նոր բառեր. Թ պրակ»-ը պարունակում է մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող շուրջ 1100 բառամիավոր, որոնք վկայված չեն հայոց լեզվի բացատրական և նորաբանությունների բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, բնագրային օրինակը, աղբյուրը: Առկա են նաև բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության է:

Պապիկյան Ս., Դիտարկումներ «հատկական փոխառություն» տերմինի մասին (հոդված)

Հոդվածում նշվում է, որ փոխառությունը ուրիշ լեզուներից բառեր և լեզվական միավորներ փոխառելն է՝ որպես հետևանք ժողովուրդների միջև քաղաքական, տնտեսական, մշակութային տարաբնույթ հարաբերությունների: Հատկապես շատ են լինում փոխառությունները, երբ մի ժողովուրդ գտնվում է մեկ այլ ժողովրդի քաղաքական գերիշխանության ներքո. բնականաբար փոխառու լեզու են ներթափանցում այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնք հատուկ են իշխողի լեզվին:

Հոդվածագիրը նշում է, որ հայերենում *հատկական փոխառություն* տերմինը շրջանառության մեջ է դրել Էդ. Աղայանը: *Հատկական փոխառություններն* անվանում են նաև *տարաշխարհիկ*

բառեր, օտար բառեր, էկզոտիզմներ: Այս դեպքում առկա է տերմինային համանիշության երևույթը: Հոդվածագրի վկայությամբ՝ տերմինաբանության մեջ ընդունված է տվյալ տերմինահամակարգում մեկ տերմինին՝ մեկ իմաստ սկզբունքը: Եվ ըստ նրա՝ պետք է հնարավորինս խուսափել տերմինային համանիշությունից, որը կարող է շփոթությունների տեղիք տալ:

Հոդվածագրի կարծիքով՝ հատկական փոխառություն տերմինը հայերենի լեզվաբանական տերմինահամակարգում մենիմաստ է և պատճառաբանված: Այն պարզապես անսովոր է, և ժամանակի ընթացքում, հաճախակի օգտագործելու հետևանքով, կարող է իր սեփական ճանապարհը հարթել: Փոխառությունների և հատկական փոխառությունների միջև սահմանը փոփոխական է: Երբ առարկան կամ սովորույթը յուրացվում է, միաժամանակ տեղի է ունենում հասկացության յուրացում, որն էլ այն վերածում է սովորական փոխառության:

Պապիկյան Ս., «Ժողովուրդ» օրաթերթի լեզվի մասին (հոդված)

Հոդվածագիրը, անդրադառնալով «Ժողովուրդ» օրաթերթի լեզվին, նշում է, որ զանգվածային լրատվության միջոցները որոշակիորեն ձևավորում են հասարակության մտածելակերպը: Մամուլով, հեռուստատեսությամբ, սոցիալականներով սփռվող խոսքը լի է բացասական տեղեկատվությամբ, որն ազդում է հասարակության մտածելակերպի, նաև ենթագիտակցության վրա՝ փոխելով նրա գնահատողական վերաբերմունքը առկա իրադարձությունների նկատմամբ: Հոդվածագիրն առանձնացնում է մեր օրերում տեղեկատվության մեջ մեծ դեր ունեցող *մանիպուլյացիան, մանիպուլյատիվ միջոցները*:

Հոդվածում նշվում է, որ «Ժողովուրդ» օրաթերթի լեզուն գրագետ և հավասարակշռված է: Թերթում սուր հարցադրումներ չկան, հրապարակումներում տեղեկատվությունը չեզոք է. ըստ հոդվածագրի՝ փորձում են հասարակությանը ավելորդ չզրգռել և թողնում

են նրա հայեցողությանը՝ ինքնուրույն եզրահանգումներ կատարելու: «Ժողովուրդ» օրաթերթի դիտարկված համարներում ժարգոնային բառեր և արտահայտություններ առկա չեն:

Պապիկյան Ս., «Բնակավայր, կացարան» իմաստային խմբի որոշ հատկական փոխառությունների քննություն (հոդված)

Հոդվածում դիտարկվում են տարբեր լեզուներից հայերենին անցած «բնակավայր, կացարան» իմաստային խմբին պատկանող որոշ հատկական փոխառություններ: Զանազան աղբյուրներից (գրականություն, մամուլ, հեռուստատեսքեր) հայերենում որոշակի հաճախականություն ունեցող այդ փոխառությունները դասակարգվում են ըստ իմաստային խմբերի, ծագման, հաճախականության և այլն:

Հոդվածագիրն արձանագրում է, որ «բնակավայր, կացարան» իմաստային խմբի՝ դիտարկված հատկական փոխառությունները հայերենին անցել են տարբեր լեզուներից. դրանց մեջ կան նաև միջնորդավորված փոխառություններ:

Նշվում է նաև, որ այդ բառերի մի մասը դուրս է եկել գործածությունից՝ համալրելով պատմաբանների շարքը, որոնք գործածվում են ըստ անհրաժեշտության:

Սարգսյան Ն., Արևմտահայերենի դերը ազգային ինքնության պահպանման և հայերենի ուսումնասիրման գործում (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ արևմտահայերենի պահպանումը հաճախ դիտարկվում է ազգային ինքնության, մշակութային ժառանգության պահպանման և հայկական սփյուռքի շարունակականության համատեքստում, սակայն կարևոր է հաշվի առնել նաև այն պահպանելու լեզվական նշանակությունը: Ընդգծվում է արևմտահայերենը պահպանելու գիտական կարևորությունը՝ որ-

պէս հայոց լեզվի զարգացման լեզվական համակարգի մի աստիճան՝ ուշադրություն դարձնելով դրա կառուցվածքային նմանություններին միջին հայերենի հետ:

Հոդվածում քննվում է նաև արևելահայերենի և արևմտահայերենի փոխադարձ կապը և դրա հնարավոր ազդեցությունը արևմտահայերենի պահպանման վրա:

Լիբանանի հայ համայնքի օրինակով ներկայացվում է արևմտահայերենի կարևորությունը ազգային ինքնությունը պահպանելու գործում:

Սուքիասյան Հ., Հայերենը բազմալեզու միջավայրում (հոդված)

Հոդվածագրի հավաստմամբ՝ առանց նպատակային ու գործուն պետական լեզվական քաղաքականության անհնար է արդյունավետորեն դիմակայել բազմալեզու միջավայրերում հայերենի առջև ծառայած մարտահրավերներին: Ըստ նրա՝ պետք է ամեն կերպ ապահովել հայերենի պատշաճ դիրքավորումը օտար լեզուների հետ առնչությունների բոլոր հարթակներում՝ սկսած կրթական համակարգից մինչև թվային տեխնոլոգիաներ: Քանի որ հայերենի գործառնությունը ընդլայնել է իր տեխնոլոգիական սահմանները, անհրաժեշտ է ձևավորել լեզվաբանների, մանկավարժների և բարձր տեխնոլոգիաների մասնագետների համագործակցության նոր ձևաչափեր ու կառուցակարգեր:

Հոդվածագրի համոզմամբ՝ միայն նշված գործոնների ապահովմամբ է հնարավոր երաշխավորել հայերենի՝ որպէս հայոց ինքնության կարևորագույն գործոնի պահպանումն ու շարունակական զարգացումը մեր հարափոփոխ ժամանակներում:

Տելեքյան Մ., Բառերի բացատրության բացասական կամ ժխտական եղանակը հայերենի բառարաններում (հոդված)

Հոդվածում նշվում է, որ բառարանային բացատրությունը և

բառահողվածը ընդհանուր առմամբ պետք է հնարավորինս սպառիչ տեղեկություն տան բառի նշանակության մասին և ցույց տան նրա տեղը լեզվի բառային համակարգում, իմաստային, նաև բառակազմական կապերը բառային այլ միավորների հետ:

Հոդվածագիրը ներկայացնում է բառարաններում գերակշռող բացատրության հիմնական եղանակը՝ նկարագրական կամ տրամաբանական բացատրությունը, որն ամենից առաջ կիրառվում է արմատական բառերի մեկնության համար: Նշվում է, որ բառերի բացատրության ժամանակ երբեմն առավել նպատակահարմար է լինում այն հատկանիշների թվարկումը, որոնք տվյալ բառով արտահայտվող առարկան (երևույթը, հատկանիշը, գործողությունը և այլն) չունի, և դա բառերի բացատրության բացասական կամ ժրխտական (նեգատիվ) եղանակն է: Ըստ հոդվածագրի՝ բացասական բացատրության մի տարատեսակ է հականիշներով բացատրությունը, որը ինքնուրույն սովորաբար չի գործածվում: Այն լինում է իբրև հավելում նակարագրական կամ հոմանշային բացատրությանը:

Ֆելեթյան Ս., Բառերի պատճառաբանվածության մթագնումը հայերենում (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ լեզվի պատմական զարգացման ընթացքում բաղադրյալ բառի իմաստաբանության, իմաստային կառուցվածքի մեջ հնարավոր են փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել բառի բաղադրյալ կազմության ընկալման մթագնման, անգամ կորստի: Երևույթը կոչվում է ապապատճառաբանում (demotivation, демотивация):

Հոդվածում քննվում են պատճառաբանվածության մթագրման, կորստի տարբեր փուլերում գտնվող բառեր և բաղադրյալ բառի ապաստուգաբանման հիմնական պատճառները:

Նշվում է, որ բառերն ըստ ձևաիմաստային պատճառաբանվածության բաժանելիս համաժամանակյա մոտեցման դեպքում

դիտվում են երկու ծայրակետեր, բնեռներ՝ լեզվի արդի փուլում պատճառաբանված իմաստ ունեցող բառեր (բաղադրյալ բառերի ճնշող մեծամասնությունը) և ներքին ձևից զուրկ բառեր (պարզ բառեր, փոխառություններ): Տարածամասնակյա ուսումնասիրություն կատարելիս առանձնացվում են նաև միջանկյալ օղակներ:

Հոդվածագրի կարծիքով՝ բառի պատճառաբանված իմաստի մթազնույնը կամ լրիվ կորուստը նպաստում է բառիմաստի հետագա զարգացմանը, հնարավորություն է տալիս բառին ձեռք բերելու նոր (մեծ մասամբ փոխաբերական) իմաստներ, քանի որ վերանում է բառաբաղադրիչներով պայմանավորված իմաստային սահմանափակումը:

Ֆիզենկճեան Ա., Արեւմտահայերէնի ուսուցման կերպի /մեթոտի/ հիմնահարցերը եւ անոնց յաղթահարման հեռանկարները (հոդված)

Յօդուածի թեման կ'առնչուի արեւմտահայերէնի ուսուցման մեթոտի հիմնահարցերուն եւ անոնց յաղթահարման հեռանկարներուն: Յօդուածագիրը պատմական համառօտ ակնարկով անդրադարձած է Սփիւռքի գրական արեւմտահայերէնի դասագիրքերու կառուցուածքի մեթոտաբանութեան, ուսուցիչներու մանկավարժական պատրաստուածութեան եւ որակաւորման խնդիրներուն: Հետագօտած է Սփիւռքի հայկական վարժարաններէն ներս աւանդուած հայագիտական առարկաներու ուսուցման գործընթացը՝ համաձայն տուեալ երկրի կրթական նախարարութեան կողմէ դասաւանդման դասատախտակի մէջ արտօնեալ առարկաներուն, առկայ ծրագիրներուն, սահմանափակումներուն եւ այս բոլորի մէջ հայագիտական առարկաներու ուսուցման համար արտօնուած դասաժամերը:

Յօդուածի աւարտին յօդուածագիրը խօսած է միաժամանակ քննած է 20-րդ դարու վերջի եւ 21-րդ դարու առաջին քառորդին ողջ մարդկութեան եւ յատկապէս հայութեան դիմագրաւած մարտա-

հրաւերները ու այս բոլորով հանդերձ հանդէս եկած է հարցադրումներով եւ առաջարկութիւններով, որոնք նիւթական աջակցութեան կողքին կարիք ունեն մարդուժի, որոնց մասնագիտական պատասխանները /հիմնաւորումները/ կրնան նպաստել հայերէնի գրական երկու ճիւղերու վերամշակման:

**Ֆիշենկճեան Ա., Ներգործական բայերու խնդրառութեան
հիմնահարցերը մէջ (Արեւելահայերէն- արեւմտահայերէն)
(հոդված)**

Յօդուածը կը ներկայացնէ ժամանակակից հայերէնի (արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի) շարահիւսական համակարգի մէջ կարեւորագոյն նշանակութիւն ունեցող բայական խնդրառութեան հիմնահարցերը: Յօդուածագիրը կ'անդրադառնայ առաւելապէս ներգործական բայերու խնդրառութեան տեղաշարժերուն՝ հիմնուելով բառարաններու եւ արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերուն, համաձայն հեղինակներու կողմէ արտայայտուած իմաստային եւ հոլովառական խնդիրներուն, որոնք երբեմն իրար հակասող եզրայանգման պատճառով ոճական եւ ուղղախօսական տարակարծութիւններ կրնան ստեղծել: Յօդուածագիրը կը քննէ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի ներգործական բայերուն բառիմաստային եւ հոլովառական խնդիրները. օրինակներով կը բացատրէ, որ ներգործական բայերը արեւելահայերէնի մէջ իրի համար կը պահանջեն ուղղականաձէ հայցական հոլով, իսկ անձի համար՝ տրական. մինչդեռ արեւմտահայերէնի մէջ անձի եւ իրի համար՝ հայցական հոլով, շեշտելով նաեւ որ կան բացառութիւններ: Յօդուածի աւարտին յօդուածագիրը հանդէս եկած է առաջարկութիւններով:

Ֆիշենկճեան Ա., Արեւմտահայերէնը Հայաստանի Հանրապետութեան մէջ (21-րդ դար) (հոդված)

Յօդուածը գրական հայերէնի երկրորդ ճիւղի՝ արեւմտահայերէնի, անցած հարիւրամեայ պատմական հոլովոյթին կը վերաբերի: Յօդուածագիրը կը պարզէ, որ Գեղապաշտ սերունդը իրենց գրական ստեղծագործութիւններով 19-րդ դարու վերջը եւ 20-րդ դարու առաջին տասնամեակին արեւմտահայերէն հարստացուցած էին ինքնաստեղծ բառապաշարներով, գեղանկարչական բառակապակցութեամբ: Սակայն Յետեղեռնեան տարիներուն արեւմտահայերէնը իր ժողովուրդի նման սփռուեցաւ աշխարհի տարբեր ցամաքամասերուն, կրեց տուեալ երկրի լեզուի ազդեցութիւնը, չունեցաւ համակարգող մարմին, պահպանման ու պաշտպանման յանձնաժողով, որով կարենար մէկտեղել, ուսումնասիրել արեւմտահայերէն լեզուի առանձնայատկութիւնները եւ հասցնել գիտական մակարդակին, ինչպիսին էր արեւելահայերէնը: Ան կը նշէ, որ հայրենի բանասերներու մէկ մասը ծանօթ ըլլալով Սփիւռքի համայնքներու ուսումնակրթական հիմնախնդիրներուն, հետազօտած եւ հասած էր եզրայանգման, որ արեւմտահայերէն կը գտնուէր ծանր պայմաններու մէջ: Եւ ըստ այդմ, կ'անդրադառնայ որ լեզուն կենդանի պահելու եւ պահպանելու հիմնական կեդրոնը կը մնար Հայաստանը: Յօդուածը կը ներկայացնէ 20-րդ դարու վերջի քառորդէն սկսեալ մինչ օրս Հայաստանի բարձրագոյն հաստատութիւններու եւ պետական գերատեսչութիւններու կողմէ արեւմտահայերէնի պաշտպանման ու պահպանման առաջադրանքով տարուած աշխատանքները /հայրենիք-սփիւռք համաժողովներ, մենագրութիւններ, յօդուածներ, գիտաժողովներ, ուսումնական ձեռնարկներու հրատարակութիւն, դասաւանդում եւ այլն/:

Այսուհանդերձ, յօդուածագիրը հետեւեալ հաստատումը կը կատարէ, թէ Հայաստանի Հանրապետութեան ուսումնակրթական հաստատութիւններէն ներս Արեւմտահայերէնի ուսուցման գլխաւոր հիմնախնդիրը կայ եւ կը մնայ՝ Արեւմտահայերէն լեզուի խորագիտակ մասնագէտ-մանկավարժի անհրաժեշտութիւնը

Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

2025 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հովհաննիսյան Ս.Գ., Սարգսյան Դ. Յու., Հեքիաթի հոգելեզվաբանական կիրառությունը, Ե., «ՎԻՎԻԷՄ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատ., 2025, 152 էջ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

1. «Կիրառական լեզվաբանության հարցեր», պրակ Գ, Ե., ԼԻ հրատ., 2025, 185 էջ:
2. Սարգսյան Մ.Ա., Միքայելյան Մ.Ա., Բաղրամյան Ս.Ե., Խաչիրաբյան Ն.Պ., Հայերենը որպես սփյուռքի լեզու և օտար լեզու. Սանկտ Յ. Պետերբուրգի հայ համայնքի օրինակը, Ե., ԱԻԿԱ-Արմենիա. Ժամանակակից արվեստի ինստիտուտ, 2025, 122 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Գրիգորյան Գ.Գ., Բարևելու ժեստերի փոփոխությունը Կովիդ-19-ի (COVID-19) ժամանակաշրջանում. հանրամշակութային վերլուծություն, «Բառագիտության արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 13-21:
2. Դալալյան Տ.Ս., Վիպաբանական ընդհանուր սխեմաները հայկական և օսական էպոսներում, «Պատմաբանասիրական հանդես», 2025, 2 (229), էջ 137-156:

3. Համբարձումյան Վ.Գ., Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրությունների խնդիրները լեզվի պատմության համատեքստում, «Հայ բանասիրութեան հեռանկարներ. ուսումնասիրութեան ու ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Լոս Անջելես-Երևան, N 1, ԱՄՆ Արեւմտեան թեմի հրատ., 2025, էջ 20-31:
4. Համբարձումյան Վ.Գ., Ստուգաբանական դիտարկումներ, «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսում, 2 (33), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 57-67:
5. Համբարձումյան Վ.Գ., Արսեն Այտրնյան. Ականավոր լեզվաբանը, հայերենագետը (ծննդյան 200-ամյակի առթիվ) // «Գիտության աշխարհում», 2025, 4, էջ 16- 21:
6. Հովհաննիսյան Ս.Գ., Գիտություն. հանրամատչելիացում, հանրայնացում, հանրահոչակում, զարգացում (հոդվածների ժողովածու), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2025, էջ 146-153:
7. Միքայելյան Մ.Ա., Հայերենում ռուսերենի միջնորդությամբ կատարված արաբական փոխառություններ, «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսում, 2 (33), Ե., ԼԻ հրատ., 2025, էջ 15-25:
8. Մկրտչյան Մ.Ա., Ներհականիշությունը հայերենի բառապաշարում, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», Ե., հատ. 16, թիվ 2 (47), էջ 72-88:
9. Մկրտչյան Մ.Ա., Հիշողությունն իբրև մշակութային հիշողություն ձևավորող գործոն. նշանագիտական մոտեցում, Բանբեր Բյուսովի անվան պետական համալսարանի. լեզվաբանություն և բանասիրություն, 1 (72), Ե., էջ 72-88:
10. Սարգսյան Մ.Ա., Թվային հայագիտությունը որպես նոր ուղղություն. Խնդիրներ և մարտահրավերներ, «Հայ բանասիրութեան հեռանկարներ. ուսումնասիրութեան ու ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Լոս Անջելես-Երևան, N 1, ԱՄՆ Արեւմտեան թեմի հրատ., 2025, էջ 72-84:
11. Սարգսյան Մ.Ա., Հայերենի ուսուցման առանձնահատկությունները միջմշակութային հաղորդակցության համատեքստում,

- «Հայագիտությունը լեզուների և մշակույթների համատեքստում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, ՄՊԼՀ հրատ., 2025, էջ 192-199:
12. Avetyan S.R., Several Different Origins of the U /A/ Vowel-Final Imperative of Simple Verbs in the Է/Ի /Է/Ի/ Conjugation in Modern Armenian Dialects, Yerevan, "Bulletin of Yerevan University. Philology", Vol. 16, N 1 (46), 2025, p. 57-72.
 13. Avetyan S.R., A morphosyntactic analysis of Latin multi-word anatomical terms and their translation equivalents in English and Armenian, "Hermēneus". Spain, Revista de Traducción e Interpretación, 2025, vol. 27, p. 97-125.
 14. Firyán A., Anomic Trends in Business Ethics and Leadership Research in Changing Society, *Business Ethics and Leadership*, 9(4), 2025, Academic Research and Publishing UG (i.G.) (Germany), p. 163-179.
 15. Mkrtchyan M.S., Book Cover as a Semiotic Translation: The Case of the Autobiography Mayrig by Henri Verneuil, Tomsk, ПРАЭНМА. Journal of Visual Semiotics, 2025, iss. 4 (46), p. 122-141.
 16. Tigranyan S., The debates around the createdness of the Qur'an: Ibn Taymiyyah's approach, Bulletin of the Institute of Oriental Studies, Vol. 5 No. 1, 2025, NAS RA, p. 14-27.
 17. Амбарцумян В.Г., Язык труда «Многовещательные речи» св. Григория Просветителя: оригинал или перевод?, «Золотой V век армянской культуры: Достижения. Мировое значение» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, «Ключ-С» հրատ., 2025, с. 279-290.
 18. Далалян Т.С., Отражение учения о четырех первоосновах мира в духовной и философской литературе IV-VII вв, «Золотой V век армянской культуры: Достижения. Мировое значение» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, «Ключ-С» հրատ., 2025, с. 189-195.
 19. Далалян Т.С., Общая характеристика фольклорных материалов в Эминском этнографическом сборнике, "Культурное наследие Ро-

- ссийской и Ново-Нахичеванской епархии Армянской Апостольской Церкви. 1717 – 2025", Санкт-Петербург, Материалы международной конференции по арменоведению, 2025, с. 132-138.
20. Тигранян С., Критика деятельности Фатимидских халифов и отражение религиозных положений в учении Ибн Таймийи, Вестник Российско-Армянского (Славянского) университета" (серия: гуманитарные и общественные науки), N 3, 2025, с. 178-190.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Ավետյան Ս., Հայերենի ժամանակակից բարբառներում է/ի խոնարհման պարզ բայերի և ձայնավորահանգ հրամայականի մի քանի տարբեր ծագումները (հոդված/անգլերեն)

Հոդվածում փորձ է արվում ցույց տալ, որ հայերենի ժամանակակից բարբառներում է/ի խոնարհման պարզ բայերի և ձայնավորահանգ հրամայականի ձևերը ունեն մի քանի ծագում: Մասնավորապես, հայերենի ժամանակակից բարբառների համապատասխան փաստերի համաժամանակյա և տարաժամանակյա վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել երեք հիմնական զարգացումներ, որոնք հանգեցրել են տվյալ ձևերի ծագմանը. 1) որոշ բարբառներում (օր.՝ Ազուլիսի, Կարճևանի և Կաքավաբերդի) հրամայականի այդ ձևը *ես > ա* օրինաչափ հնչյունափոխության արդյունք է, 2) Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում տվյալ ձևը մեծ հավանականությամբ առաջացել է բարձր կիրառահաճախականություն ունեցող երեք անցողական բայերի (այն է՝ *ասել*, *հրամ.* եզ. 2-րդ դ. *ասս՛*, *ածել* (որը սկզբնապես նշանակել է «քշել, բերել», իսկ հետագայում՝ «լցնել»), *հրամ.* եզ. 2-րդ դ. *ածա՛*, *անել*, *հրամ.* եզ. 2-րդ դ. *արա՛*) համաբանական ազդեցությամբ, ընդ որում՝ *ասել* բայը առանցքային դեր է խաղացել այդ գործընթացում, 3) իսկ մի շարք այլ բարբառներում (օր.՝ Բայազետի և Դիաղիհի բարբառներում, ինչպես նաև Ալաշկերտի խոսվածքում) հավանական է թվում, որ

է/օժանդակ բայի ներկա եզ. 3-րդ դ. վերջահար ձևը *է > ա* հնչյունափոխության է ենթարկվել մկանային լարվածության արտասանական թուլացման հետևանքով: Հետագայում այդ *ա* ձայնավորը օժանդակ բայի ներկա եզ. 3-րդ դ. ձևից համաբանությամբ տարածվել է *է* խոնարհման բայերի ըղձական եզ. 3-րդ դ. ձևի, իսկ այնտեղից էլ՝ հրամ. եզ. 2-րդ դ. ձևի վրա:

**Ավետյան Ս., Հակոբյան Ա., Առտիալի բարբառում
հրամայականի կազմության շուրջ
(հոդված)**

Բնագրային տեքստանմուշների վերլուծությամբ փաստարկվում է, որ թեև Առտիալի բարբառում հին հայերենի *է* և *ի* խոնարհումները միաձուլվել են մեկ ընդհանուր խոնարհման մեջ, այդուհանդերձ երկու խոնարհումների սկզբնական հակադրությունը (մասնավորապես՝ *-է* և *-ի* վերջավորությունների տարբերակումը), հակառակ է. Աճառյանի նկարագրության, պահպանվել է ըղձականի եզակի 3-րդ դեմքի ձևում (որը ծագմամբ ներկայացնում է հին հայերենի սահմանական ներկայի եզակի 3-րդ դեմքի ձևը): Սակայն թե՛ նախկին *է* և թե՛ նախկին *ի* խոնարհումների բայերը հրամայականը կազմում են նույն կերպ՝ եզակիում ստանալով *-է*, իսկ հոգնակիում՝ *-եցէք* վերջավորություն: Ինչ վերաբերում է եզակի հրամայականի *-իըր* (< *-իր*) վերջավորությանը, այն չի հանդիպում նախկին *ի* խոնարհման պարզ բայերի դեպքում (դարձյալ հակառակ է. Աճառյանի նկարագրության). Առտիալի բարբառում միայն նախկին *է* և *ի* խոնարհումների ածանցավոր բայերը, ինչպես նաև *ա* խոնարհման բայերն առհասարակ եզակի հրամայականում հանդես են բերում *-իըր* վերջավորություն:

Ավետյան Ս., Լատիներեն բազմաբառ անատոմիական եզրույթների և նրանց անգլերեն և հայերեն թարգմանական համարժեքների ձևաշարահյուսական վերլուծություն
(հոդված/անգլերեն)

Հոդվածը քննում է լատիներեն երկանդամ և բազմանդամ անատոմիական եզրույթները անգլերեն և հայերեն թարգմանելիս անհրաժեշտաբար և/կամ կամրնտրողաբար կատարվող ձևաշարահյուսական փոփոխությունները: Հիմնական ձևաշարահյուսական տարբերությունները կապված են լատիներեն որոշիչները և հատկացուցիչները անգլերեն և հայերեն թարգմանելու մի քանի տարբեր եղանակների հետ: Բացի այդ՝ տարբերություններ են նկատվում նաև լրացումների՝ ինչպես լրացյալի, այնպես էլ միմյանց նկատմամբ ունեցած շարադասության մեջ: Փաստարկվում է, որ քննության ենթարկվող ձևաշարահյուսական տարբերությունները մասամբ պայմանավորված են դիտարկվող լեզուների տիպաբանական առանձնահատկություններով, մասամբ էլ անգլերենին և հայերենին բնորոշ լեզվական նախապատվություններով և լեզվագործածության օրինաչափություններով:

Դալայան Ս., Վիպարանական ընդհանուր սիեմաները հայկական և օսական էպոսներում (հոդված)

Հայոց երեք էպոսները՝ ազգածնական, հեթանոսական ու միջնադարյան-քրիստոնեական, ինչպես և օսական «Նարթյան» էպոսը իրենց վերջնական ձևավորումը ստացել են պատմական տարբեր ժամանակաշրջաններում: «Հայկյանների» ազգածնական էպոսի ձևավորումն ավարտվել է մ.թ.ա. IX–VIII դդ., «Երգք վիպասանաց» կամ «Վիպասանք» հեթանոսական էպոսի կազմավորումը՝ մ.թ.ա. II- մ.թ. I դդ, իսկ «Սասնա ծռեր»-ը՝ վերջնական տեսք ստացել է գլխավորաբար IX–X դդ: Օսական «Նարթյան» էպոսի հիմնական կորիզը կազմավորվել է միջնադարում՝ XIII–XIV դդ., սակայն ամե-

նահին սյուժեների ձևավորումը վերաբերում է սկյութական ժամանակաշրջանին՝ մ.թ.ա. VIII-VII դդ.: Համեմատական առասպելագիտության ու էպոսագիտության մեթոդի կի-րառմամբ, մեր և այլ հետազոտողների նախկին աշխատանքների արդյունքները հանրագումարի բերելով, փորձ ենք անում հիմնավորելու այն տեսակետը, որ նշված բոլոր էպոսներում առկա է հերոսների հինգսերընդանի տոհմաձառը և քառաճյուղ վիպաբանական կառուցվածքը, ընդ որում՝ բացի առաջին ճյուղից, մյուս բոլոր ճյուղերը հյուսված են մեկ գլխավոր հերոսի շուրջ: Ըստ այդմ՝ տրվում է յուրաքանչյուր սերնդի գլխավոր հերոսի առասպելաբանական նկարագիրը և ամեն մի էպոսում նրա վիպական արտահայտությունը՝ ա. ամպրոպային նախակերպար, բ. երկվորյակ /եռորյակ եղբայրներ, գ. արդարություն հաստատող հերոս, դ. գլխավոր վիշապամարտիկ, ե. մեռնող-հառնող հերոս: Բանաձևված եզրահանգումն այն է, որ նրշված բոլոր էպոսներում առկա են հետևյալ քառաճյուղ կառույցները. «Հայկյանների» էպոսում՝ 1. Հայկ, Արամանյակ-Արամայիս, 2. Ամասիա / Գեղամ / Չարմա, 3. Արամ, 4. Արա Գեղեցիկ, «Երգք վիպասանաց»-ում՝ 1. Ծովինար, Տիգրան, 2. Մանատրուկ, 3. Արտաշես, 4. Արտավազդ, «Մասնա ծոեր»-ում՝ 1. Ծովինար, Մանասար-Բաղդասար, 2. Մեծ Մհեր, 3. Դավիթ, 4. Փոքր Մհեր, օսական «Նարթյան» էպոսում՝ 1. Վարխագ, Ախշար-Ախշարթագ, 2. Վըրըզմագ, 3. Բաթրաձ, 4. Սուսան:

**Դալայան Տ., Էմինյան ազգագրական ժողովածուի
բանահյուսական նյութերի ընդհանուր բնութագիրը
(հոդված/ռուսերեն)**

Էմինյան ազգագրական ժողովածուն (ԷԱԺ) հրատարակվել է Մոսկվայի Լագարյան ճեմարանի կողմից Ալեքսանդրապոլում, Վաղարշապատում, Մոսկվայում, Նոր Նախիջեւանում և Թիֆլիսում 20-րդ դարասկզբին: Ժողովածուի գրեթե բոլոր հատորների գլխավոր խմբագիրը եղել է նշանավոր հայագետ Գ. Խալաթյանցը

(1-8), միայն վերջին հատորը լույս է տեսել Կ. Կոստանյանի խմբագրությամբ (9): «Էմինեան» ժողովածուում ընդգրկված են ոչ միայն ազգագրական և բանահյուսական բնույթի նյութեր, այլև լեզվաբանական աշխատանքներ, ինչպես, օրինակ՝ Հ. Աճառյանի բարբառագիտական բառարանը, և զանազան նյութերի թարգմանություններ: Բանահյուսական նյութերի մեջ առկա են՝ 117 հեքիաթ և առակ, 276 երգ՝ տարբեր ժանրերի, 7861 առած, ասացվածք և հանելուկ, ինչպես նաև «Մասնա ծոեր» ժողովրդական էպոսի 4 արժեքավոր պատումներ ու հայ-իրանական «Ռուստամ Չալ» էպոսի բազմաթիվ պատումներ, քրդական վիպասքեր: Այսպիսով, բանահյուսական նյութեր է պարունակում Է ԱԺ-ի հատոնների մեծ մասը՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ հատորները: Այդ նյութերից շատերը հետագայում ընդգրկվեցին տարբեր բանահյուսական ժողովածուներում, հայ ժողովրդական հեքիաթների և «Մասնա ծոեր» էպոսի պատումների բազմահատորյակներում: Այդուհանդերձ, ԷԱԺ-ի բազմաթիվ նյութեր մինչ օրս կարոտ են հանգամանալից լեզվաբանագիտական քննության, ինչը մտադիր ենք անել հետագա աշխատանքներում:

Համբարձույան Վ., Հայերեն ստուգաբանություններ (հոդված)

Հայերենի բառապաշարի պատմական ուսումնասիրության մի ոլորտ է արմատի (արմատական բառի) ծագումնալիս բնույթի որոշումը (ստուգաբանությունը): Այս ոլորտում դեռևս կան միավորներ, որոնց ծագումը մնում է չբացահայտված, այլև որոշ դեպքերում, նկատի ունենալով տվյալ գիտության ձեռքբերումները, հարկ է լինում կատարել լրացումներ կամ վերանայումներ: Այս դեպքում նման քննության են առնվում հայերեն *պաղ*-(*պաղպաղուն*), *փետուր*, *փիճի* («մի ծառատեսակ. սոճի»), (*ս*)*փիռ* // (*ս*)*փիւռ* («փռել, տարածել. փովածք») և *փուռն* («(հացի) փուռ» միավորները: Հայերենի ստուգաբանական բառարաններում դրանք համարվում են կա՛մ անհայտ ծագման, կա՛մ ոչ բավարար չափով ստուգաբանված բառ(արմատն)եր:

